ւոր Դարբնաց քար կոչուած տեղը՝ ուր իր ձեռքով հաստատեց Ս. Կուսի անունով եկեղեցի մը և հոն դրաւ Ս. Կուսին պատկերը զոր ան բերած էր. Նորաշէն եկեղեցիին մօտ չինել կու տայ կուսանաց յատուկ խրճիթներ ու վանք և տեղը կ'անուանէ Հոգեաց վանք յանուն Տիրամօր (*) (Խոր. քաղուածք «Պատասխանի Թղթոյն Սահակայ», էջ 290–6)։

Հռիփսիմեան կոյսերը իրենց ուղևորութեան ժամանակ կը հանդիպին նաև Երուսաղէմ և ուխտի կ'երթան Դեթսեմանի Տիրամօր գերեզմանին, կ'ըսէ պատմիչը. «Եւ երկրպագելով Աստուածածնին և բազում արտասուս հեղեալ. մնալով անդ ամսօրեայ ժամանակաւ. ապա տեսիլ երևեալ սրբոցն, և հրաման առեալ գնալ ի Հայք յերկիրն Արարատեան ի բաժին Թադէոսի առաքելոյն։ «Եւ զպատկերն փայտեղեն որ եղեալ է յերեսս իմ յաւուր փոխման իմոյ (**), զնա խնդրեսջիք, կատարեալ զընթացս ձեր արեամբ» (Խոր. էջ 299)։

11. Այն տեղը՝ ուր Ս. Կուսին յուղարկաւորութիւնը արգիլուեցաւ. — *Դաւթի գուռնէն ուղիղ յառաջանալով՝ 40 քայլ հեռու պատի մը քով կը նշմարուի հողին մէջ տնկուած սիւնի կտոր մը։ Այս սիւնը կը յիշեցնէ այն հրաշքը որ տեղի ունեցաւ Ս. Կուսի յուղարկաւորութեան ժամանակ, երբ հրեաները փորձեցին անարգել Ս. Կուսին դագաղը։*

(*) «Հոգւոց վանքն, ուր կայ կենդանագիր պատկերն Տիրամայր Աստուածածնին զոր եբեր սուրբ առաքեալն Բարդուղիմէոս»։

(**) «Սուրբ Աստուած» երգին **փոխաւորեալը**, ըստ աւանդութեան, «Թովմաս առաքեալն ի թաղումն Տիրամօրն է ասացեալ. որպէս գրեալ է ի գիրս որ «**կանոնական լրմունք**» կոչի», (**Տաք.** էջ 633–4)։